Որքան գովելի է այս նոր քայլը, այնքան ափսոսալի է Աւճարեան թատրոնի ներկայ զեկավարող անդամների անտարբերութիւնը։ Ինչպէս նկատում ենք, անցեալ եւ այս տարվայ սեզօնի հայոց սէկցիայի անդամների գործունէութեան մէջ մեծ տարբերութիւն կայ։ Նկատելի է մանաւանդ այն, որ անցեալ սեզօնի զեկավարող անդամները շարունակաբար յաճախում էին բոլոր ներկայացումներին կարգ ու կանոն պահելու, իսկ այս սեզօնի անդամները բոլորովին անտարբեր են։ Քանի անգամ յայտարարել են, թէ այս ինչ կիրակի, այս ինչ պիես են խաղալու, բայց ներկայացումները տեղի չեն ունենում։ Ի՞նչն է պատճառը, եթէ ոչ սէկցիայի անդամների անտարբերութիւնը։

Ա. Լաչքարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» հետեւեալ համարը № 35 Տեառնընդառաջի տօնի պատճառով լոյս կը տեսնէ շաբաթ, փետրվարի 16-ին։

—

Թիֆլիսի դպրոցներում պատրաստութիւններ են տեսնվում տօնելու Գոգոլի մահվան յիսնամեակը։ Կը կարդացվեն դասախօսութիւններ Գոգոլի մասին, կարտասանվեն նրա հեղինակութիւններից ընտրոյթ կտորներ, կը բաժանվեն նրա հեղինակութիւնները եւ լուսանկարները։

—

Աստրախանից դպիր Լեւոն Տէր-Յովհաննիսեան ուղարկել է մեզ 10 բուբլի, որով խնդրում է մի օրինակ «Մշակ» ուղարկել որ եւ է չքաւոր հասարակութեան։ Այս առիթով դպիր Տէր-Յովհաննիսեան գրել է մեզ հետեւեալ ընտրոյթ նամակը. «Սկզբունքով հակառակ լինելով տօնակատարութեան եւ աւելորդ շռայլութեան, ամսիս 19-ին, Ղեւոնդեանց տօնին, ես չեմ կատարելու իմ անուանակոչութեան տօնը, ինչպէս սովորութիւն է այստեղ, Աստրախանում, այլ դրա փոխանակ ուղարկելով խմբագրութեանդ 10 բուբլի,—տօնիս օրը ծախսելու դրամը,—ինդրում եմ «Մշակի» ամբողջ տարվայ համարները ուղարկել որ եւ է լրագրածարաւ աղքատ հասարակութեան, որը միջոց չունի, բայց մեծ փափագ ունի առօրեայ խնդիրների մասին կարդալու»։

—

Երեքշաբթի, փետրվարի 12-ին, պ. Յ. Տէր-Գրիգորեանը, դերասանների եւ սիրողների մասնակցութեամբ՝ վրաց Աղնուականների թատրոնում ներկայացրեց Չեխովի «Արջը», «Մկնիկ» վոդեվիլը եւ Սունդուկեանցի «Էլի մէկ զոհի» երկրորդ գործողութիւնը։ «Արջի» մէջ տիկին Մայսուրեանը այրիի դերը աջողութեամբ կատարեց։ Տիկնոջ միմիկան եթէ չասենք աղքատ, գոնէ միօրինակ չը լինէր, տպաւորութիւնը, անկասկած, աւելի ուժեղ կը լինէր։ Պ. Տէր-Գրիգորեանը կալուածատէրի դերում բաւարար էր։ Տիկին Ախաչեան—Աւետեանը «Մկնիկում» Գայանէ Սերոբեանի դերը աշխոյժ եւ տաք կերպով կատարեց. աջող էր նաեւ պ. Մամիկոնեանը փաստաբան Ճերմակեանի դերում։ «Էլի մէկ զոհում» տիկին Փաշայեանը շատ լաւ տարաւ Սալօմէի դերը. տիկնոջ թէ արտասանութիւնը եւ թէ խաղը միանգամայն վայելուչ էր։ Տիկին Դօլուխանեանին Անանիի դերում մի քիչ աւելի կենդանութիւն էր հարկաւոր։ Նոյնը կարելի է ասել նաեւ պ. Մամուլեանի Միքայելի մասին։ Պ. Միրաղեանի Սուրաթովը շատ լաւ էր եւ ընտրոյթ։ Պ. Տէր-Գրիգորեանը վաճառականի դերում նոյնպէս լաւ էր։ Տիկին Մատուածատրեանը «Փակված դրան մօտ» մենախօսութիւնը աջողութեամբ արտասանեց։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են, թէ ոստիկապետ Բէրտէնսօն հեռագիր է ստացել Պետերբուրգից այն բանի մասին, որ առանձին փոխանութիւններ կոմս Տոլստոյի առողջութեան մէջ չը կան։

—

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը ներկայացրեց Թիֆլիսի Նահանգապետին դումայի որոշումը՝ միսը տեսակների բաժանելու մասին սահմանված պարտադիր կանոնների գործադրութեան վերաբերմամբ։ Ուշադրութեան առնելով, որ այդ կանոնները բաւականաչափ բարդ պահանջներ են անում մսավաճառներից, որ ազգաբնակութիւնը անծանօթ է մսի տեսակներին եւ որ օգուտ քաղելով այս հանգամանքից՝ մսավաճառները կարող են մսի ստոր տեսակը վաճառել բարձրի տեղ՝ քաղաքագլխի պաշտօնակատարը խնդրում է յետաձգել վերոյիշեալ պարտադիր կանոնների գործադրութիւնը, մինչեւ որ վճռվի մսավաճառութեան համար քաղաքային խանութներ բանալու հարցը։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ «Ցնօբիս Փուրցէլի» վրաց լրագրի հրատարակիչ Զաբադարի ընդունված կարգով միջնորդութիւն է յարուցել կառավարութեան առաջ, որով խնդրում է յիշված լրագրի խմբագիր հաստատել իրան՝ Զաբադարիին՝ այժմեան խմբագիր Ճկոնիայի փոխարէն։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութիւնը թոյլ է տուել աստիճանաւոր Լավրովին հրատարակել Բագուում մի ամենօրեայ լրագիր «Баку» անունով։ Նոր լրագրի ծրագիրը, «Кавказъ»-ի ասելով, չափազանց ընդարձակ է. Տարեկան գինը Բագուում 7 բուբլի, իսկ օտարաքաղաքացիների համար—8 ր. 50 կոպէկ։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Հանգուցեալ Արզուման բէկ Աւանեանցի ժառանգները, յաւերժացնելու համար իրանց հօր յիշատակը, նուիրել են 200 ր. թեմական դպրոցին եւ 50 ր. Շամախու արկածեալներին։ Նոյն նպատակով քաղաքում կը սկսվի հանգանակութիւն։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 8-ին, շաբաթ, դերասան Գալֆայեան մեր քաղաքում ներկայացրեց «Օտէլլո»։ Համարձակութիւն է յարմարութիւններից զուրկ գաւառական խղճուկ բեմերի վրա դնել Շէքսպիրի համաշխարհային գործերը, բայց աւելի համարձակութիւն է, երբ բեմ են բերվում առաջին պատահած մարդիկ։ Երկու շաբաթ առաջ պ. Գալֆայեան խաղաց «Համլէտ», սակայն չը նայած այն հանգամանքին, որ այդ անգամ խաղին մասնակցում էին համեմատաբար լաւ կատարողներ, բայց եւ այնպէս հասարակութիւնը այն չափով գոհ չը մնաց, որքան սպասվում էր։ Մի եւ նոյն ժամանակ պ. Գալֆայեան թանգացրել էր առանց այն էլ գաւառական բեմերի թանգ արժեցող տեղերի գները։ Դրան պէտք է վերագրել այն, որ «Օտէլլոյի» ներկայացմանը դահլիճի կէսից աւելին դատարկ էր։»

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Ուրբաթ, փետրվարի 8-ին, Վելօսիպեդիստների ակումբի դահլիճում, հայ դրամատիկ խմբի անդամ դերասան պ. Վրոյրը, մասնակցութեամբ մի քանի սիրողների, տուաց մի ներկայացում։ Խաղացին «Բաղաքական մահ» յայտնի դրաման 5 գործողութեամբ։ Ընդհանուր առմամբ՝ ներկայացումը անցաւ աջող։ Առանձնապէս աչքի էին ընկնում իրանց մոտածված խաղով՝ պ. Վրոյրը—Մենսիհիորի դերում եւ պ. Զարէհ՝ Կօրրադօի դերում, որը արտասվելու չափ յուզում էր հանդիսականներին։ Դահլիճը կիսով չափ լիքն էր, մուտքը միջակ։ Կիրակի, փետրվարի 10-ին, տրվում է առաջին անգամ ցերեկվայ ներկայացում. խաղացվելու է «Ադամ եւ Եւա» կօմեդիան եւ «Տիկին եմ, տիկին» կատակը։ Գոնէ այս անգամ հասարակութեան մեծամասնութիւնը չը փայլէր իր դատապարտելի բացակայութեամբ։»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Երկարատեւ գարնանային եղանակներից յետոյ, ահա մի շաբաթ է, ինչ Շուշին մառախուղի, անձրեւի եւ ձիւնի շերտի տակ է. սկսվեց դաժան ձմեռը եւ անկասկած երկար էլ կը շարունակվի։ Դառնութեամբ լի է շուշեցու կեանքը։ Շուշին, որ մեծ կախում ունէր նաւթային մայրաքաղաքից եւ շտապել էր իր ունեցածը եւս հաւելացնել ոսկու հանքերին, այսօր, չնորհիւ խիստ ճգնաժամի, նա իր գլուխը կարծես կորցրել է։ Այսօր Շուշին աղքատ եւ վատթար դրութեան մէջ է, բառիս լայն մտքով։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Հալլէ, փետրվարի 17-ին

Փետրվարի 14-ին, երեկոյեան ժամը 8-ին, Պրուսիայի Հալլէ համալսարանական քաղաքի «Loge zü den fünf Thürmen» հիւրանոցի դահլիճում կայացաւ այստեղի հայ ուսանողութեան կազմակերպած հայկական երեկոյթը, որի նպատակն էր հայկական գաղափարի տարածումն եւ արծարծումն գերմանական հասարակութեան մէջ ընդհանրապէս եւ անդուգական Նահապետ Ալիշանի մահվան յիշատակի յարգումն մասնաւորապէս։ Երեկոյթին ներկայ էր բաւական ընտրոյթ, մեծ մասամբ ինտելիգենտ հասարակութիւն։ Առանձնապէս իրանց ներկայութեամբ յարգել էին հայկական երեկոյթը Հալլէի համալսարանի ռեկտորը, դատաւորը, մի քանի աբեւելագէտ եւ ուրիշ ուսուցչապետներ իրանց ընտանիքներով, գերմանացի բազմաթիւ ուսանողներ, Հալլէի եւ Լայպցիգի համալսարանների օտարազգի ուսանողներից եւ ուսանողուհիներից շատերը, օրինակ բուլգարներ, սերբեր, ռուսներ, հրէաներ եւ այլն, իսկ հայերից գլխաւորապէս ներկայ կին Լայպցիգի, Բերլինի, Ֆրայբերգի եւ Մարբուրգի ուսանողներից եւ ուսանողուհիներից ոմանք։

Հայկական երեկոյթը բաղկացած էր երկու մասից, գրական եւ երաժշտական մասերից, որոնցից յետոյ, ամենավերջում եղաւ, պարահանդէս։

Երեկոյթը սկսվեց «Մեր հայրենիք»-ով, որից յետոյ տեղիս հայերից մէկը՝ զօկտոր Յ. Բարխուդարեան ողջունեց երեկոյթին ներկայ եղող հասարակութիւնը եւ Գերմանիայի հայերի կողմից չնորհակալութիւն յայտնեց նրանց դարձրած ուշադրութեան համար։ Դրանից յետոյ մի եւ նոյն պարոնը աշխատեց ներկայ եղող հասարակութիւնը ծանօթացնել հանգուցեալ Ղ. Ալիշանի կենսագրութեան, նրա արած գիտնական ծառայութեան հետ եւ մի եւ նոյն ժամանակ հայերի մասին մի տմիտի գաղափար տալ, բայց ցաւօք սրտի պէտք է յայտնենք, որ ճառախօսը չը կարողացաւ իր մտադրութիւնը աջողութեամբ իրագործել եւ միայն ցոյց տուաց իր անբարեխիղճ վարմունքը դէպի իրան յանձնված դերը։ Ալիշանի մասին խօսում էր մի մարդ, որ նրա մասին այնքան քիչ տեղեկութիւն ունէր, որ ներկայ եղող հասարակութիւնը բոլորովին չը հասկացաւ, թէ Ալիշանը իր որ ծառայութեան համար այնքան պատուաւոր տեղ է բռնում հայոց գրականութեան մէջ եւ թէ ճառախօսը ինչու է թռիչքներ գործում դէպի այս կամ այն, միմեանցից անկապ հարցերի չօշափումը։ Բացի դրանից ճառախօսը մի շարք անտեղի գովասանութիւններ շռայլեց հայերի հասցէին, ցանկանալով հերքել այն աննպաստ եւ բացասական կարծիքները, որ կազմել են գերմանացիները հայերի մասին իրանց մի քանի անբարեխիղճ ճանապարհորդների չնորհիւ։ Հարկաւոր էր գիտնական փաստերով, վիճակագրական տեղեկութիւններով եւ հայերի պատմութեան մէջ կատարած իրանց դերով հերքել գերմանացիների այն մեծ մասամբ անհիմն կարծիքը, իբր թէ հայերը արեւելքի հրէաներ, վաշխառուներ են, հայերը յոյներից եւ հրէաներից աւելի վատթար եւ մի շարք բացասական յատկութիւններով օժտված ժողովուրդ են եւ ոչ թէ ասիական անհիմն բացականչութիւններով։ Չը նայելով, որ երեկոյթին այդ ճառով կարելի էր աւելի դրական տպաւորութիւն թողնել հասարակութեան վրա, բայց դժբաղդաբար այդ չեղաւ, որովհետեւ Հալլէի ուսանողութիւնը սխալվել էր իր արած ընտրութեան մէջ։

Դրանից յետոյ արքունական խորհրդականի կին տիկին Ցայս, օրիորդ Քրիլէի մասնակցութեամբ, երգեց Բօսսինիի, Վագների, Ռուբինշտէյնի եւ Գունօի երաժշտական կտորներից մի քանիսը, երեք պարոններ մանդոլինի վրա նուագեցին մի քանի երգեր, Բերլինի ուսանող պ. Կարա-Մուրզայի զեկավարութեամբ հայ ուսանողներից եւ ուսանողուհիներից բաղկացած խումբը երգեց «Գնացէք տեսէք», «Բաբէ» եւ «Բամբ որոտան» երգերը։ Այդ հայկական երգերը բաւարարից աւելի լաւ տպաւորութիւն կը թողնէին հասարակութեան վրա, եթէ Հալլէի հայ ուսանողութիւնը մի քանի օր առաջ հրաւիրէր Կարա-Մուրզային խմբի նախապատրաստութեան համար։ Մի ուսանող բաւարար կերպով կարդաց Ալիշանի «Ծիծեռնակին» երգի թարգմանութիւնը, երկու ուսանողներ կարդացին Գամառ-Քաթիպայի «Մայր-Արաքսին», բայց գերմաներէն այնպիսի վատ եւ ցածր արտասանութեամբ, որ հասարակութիւնը գրեթէ ոչինչ չը լսեց։ Ոտանաւորներից եւ երգերից յետոյ հասարակութեան ցոյց տուեցին կենդանի պատկերներ, բայց մեծ մասամբ անպատակայարմար եւ ոչ հայկական կեանքից. օրինակ, թիւրքական գրեզմանատուն, պալատներ, տներ եւ այլն։ Առհասարակ երեկոյթի աջողութեան շատ նպաստեցին տիկին Ցայս եւ օր. Քրիլէ, որոնք մեծ չնորհակալութեան եւ գովասանքի արժանի են։ Դրանից յետոյ եղաւ պարահանդէս, որ տեւեց մինչեւ առաւօտեան ժամի 6-ը եւ մեծ զուարճութիւն պատճառեց պարող հասարակութեան։

Հալլէի հայ ուսանողութեան կազմած երեկոյթը եւ արած քայլը չնորհակալութեան եւ խրախուսանքի արժանի է, որովհետեւ նրանք կարողացան գլուխ բերել Գերմանիայում առաջին հայկական երեկոյթը։ Մինչեւ այժմ, որքան մենք գիտենք, միայն Շվէյցարիայի եւ Ֆրանսիայի հայ ուսանողներին է աջողվել համանման երեկոյթներ կազմակերպել։ Հալլէի հայ ուսանողութեան կատարած ձեռնարկութիւնը, յուսով ենք, օրինակ կը ծառայէ եւ Գերմանիայի միւս համալսարանական քաղաքների հայ ուսանողութեան համար, որոնք նոյնպէս կաշխատեն հայկական երեկոյթներ կազմակերպել, որովհետեւ այդ ամենալաւ միջոցն է գերմանացիներին ծանօթացնելու հայերի հետ։

Երեկոյթից կայացած զուտ արդիւնքը պէտք է յատկացվի «Եւրոպական հայ ուսանողութեան միութեան» մտիկ ապագայում հրատարակվելիք գիտնական ժողովածուին, որտեղ պէտք է մասնակցեն եւրոպացի ականաւոր հայագէտներ եւ ուրիշ գիտնականներ։

Ինչպէս լսում ենք, Լայպցիգի հայ ուսանողների մի մասն էլ ցանկանում է չուտով մի հայկական երեկոյթ կազմել։ Սրտանց խորհուրդ ենք տալիս այդ պարոններին օգտվել Հալլէի երեկոյթի պակասութիւններից, միացեալ ոյժով գլուխ բերել այդ գործը, որպէս զի կարողանան գերմանացիների վրա ցանկալի տպաւորութիւնը թողնել։

Լ. Բաբայեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ Վարի դեպարտամենտի արմատական սոցիալիստները որոշել են սենատի առաջիկայ ընտրութիւնների ժամանակ իրանց կողմից թեկնածու նշանակել յայտնի Ժորժ Կլէմանսօյին եւ որ նրա ընտրութիւնը արդէն ապահովված է։ Յայտնի է, որ Կլէմանսօ երկար տարիներ պատգամաւոր էր Վարի դեպարտամէնտի կողմից ֆրանսիական պատգամաւորների ժողովում եւ միայն 1898 թուի ընտրութիւնների ժամանակ պարտութիւն կրելով՝ չը վերընտրվեց։

—«Մալիւմաթ» ասում է, թէ Սօղանլուխի լեռնաշղթան, իր հարուստ անտառների հետ միասին, ռուսաց ձեռքն անցնելուց յետոյ՝ Էրզրումի շրջանի ազգաբնակութիւնը սկսեց սաստիկ կարիք զգալ փայտեղէնի թէ չինութեան եւ թէ վառելիքի համար։ Մի ժամանակ արհեստական անտառի աճեցումը Էրզրումի նահանգում անհրաժեշտ էր համարվում կառավարութեան կողմից եւ սպասում էր կառավարչական կամ մասնաւոր անձերի ձեռներեցութեան։ Բայց մասնաւոր անձինք առաջ անցան կառավարութիւնից, ինչպէս այդ երեւում է Բ. Դրան ներկայացրած մի միջնորդութիւնից, որ յարուցել է մի հայ—Յովհաննէս Բաղամեան։ Իր խնդիրքի մէջ Բաղամեան մատնանիշ է անում այն աջող հետեւանքների վրա, որ նա ստացել է իր տասնամեայ անտառաբուծական գործունէութեան ժամանակ Էրզրումի նահանգի խնուս շրջանում։ Բ. Դուռը լուրջ ուշադրութիւն դարձրեց Բաղամեանի միջնորդութեան վրա եւ ուղարկեց նրան երկրագործութեան մինիստրութեանը՝ պատուիրելով ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալ խնդրողին։

—Դուրբանի «Natal Witness» լրագիրը տպագրել է իր թղթակցի խօսակցութիւնը տիկին Դէվէտի հետ, որ փակված է Պիտերմարիցբուրգի կենտրօնացրած բանակում։ «Տիկին Դէվէտ պատմում է, որ նրա երկու որդիները այժմ կուում են իրանց հօր հետ միասին անգլիացիների դէմ եւ որ նրա երրորդ որդին գերի է առնված Պաարդէբերգի մօտ, գեներալ Կրոնիէի հետ միասին, եւ ուղարկված է Ս. Հեղինէի կղզին։ Նա գանգատվում է, որ անգլիական իշխանութիւնները թոյլ չեն տալիս նրան նամակագրութիւն ունենալ իր ամուսնու հետ եւ արգելում են ապրել քաղաքում, մինչդեռ այդ իրաւունքը տուել են գեներալ Սմիտի կնոջը։ Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ անգլիացիները կերակրում են նրան, տիկին Դէվէտ ամենեւին չնորհակալ չէ դրա համար անգլիացիներից, որովհետեւ ինքը հարուստ է եւ անգլիացիների օգնութեան կարիք չէ զգում։ Տիկին Դէվէտի ասելով, նրա ամուսինը երբէք անձնատուր չի լինի անգլիացիներին եւ նա անձնականապէս գերադասում է նրան սպանված տեսնել, քան զինաթափ եղած։ Անգլիացիների յոյսերը, որոնք երեւակայում են, թէ կը կարողանան բռնել Դէվէտին, նրան ծիծաղելի են թւում։

—Պրետորիայում հրատարակված է բօէրական զօրապետների մի նոր ցուցակ, բաղկացած 25 անուններից, որոնց անգլիական կառավարութիւնը դատապարտել է մշտական աքսորի հայրենիքից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 փետրվարի

ՊԻՏԵՐԲՈՒՐԳ. Փետրվարի 11-ին Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչին ներկայացաւ Քութայիսի Նահանգի ազնուականների պատգամաւորութիւնը։ Ազնուականութեան պարագլխի կարդացած ուղերձին Մեծ Իշխանը պատասխանեց. «Շնորհակալ եմ ձեզանից այն պատուի համար, որ գուք ցոյց էք տալիս ինձ ներկայ ուղերձում։ Ես երբէք չեմ բաժանել եւ այժմ էլ չեմ բաժանում Քութայիսի ազնուականութիւնը Թիֆլիսի ազնուականութիւնից, որի շահերը միաբեսակ բանց են իմ սրտին, այդ պատճառով ոչինչ նոր բան չունեմ աւելացնելու այն բոլորին, ինչ որ ասել եմ եռ Թիֆլիսի ազնուականութեան պատգամաւորութեանը։ Յանկանում եմ ձեզ միաբեսակ բարգաւաճումն»։ Նորին Կայսերական Բարձրութեան խօսքերից յետոյ պատգամաւորութիւնը ներկայացաւ Մեծ Իշխանուհիներ Մարիա Գիւերգիևնային եւ Կսենիա Ալէքսանդրովնային եւ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչի Օգոստափառ որդիներին։ Ներկայացուցչ յետոյ նախաճաշիկ տրվեց։ Նախաճաշի ժամանակ Նորին Բարձրութիւնը, բաժակը բարձրացնելով, ասեց. «Խմում եմ Քութայիսի նահանգի վրաց ազնուականութեան կենացը, այսինքն իմերեթլիների, գուրիացիների եւ մինգրելիների, եւ բարգաւաճումն եմ ցանկանում այդ ազնուականութեան որը միշտ հաւատարմութեամբ եւ նմարտութեամբ ծառայել է Թագաւորին եւ հայրենիքին»։—Օֆիցիէրական ժողովրանի դահլիճում տեղի ունեցաւ Սեվաստոպոլի պաշտպանութեան մասնակցողների ճաշը, որին ներկայ էր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ։—Փետրվարի 12-ին բուխարական էմիրը, գահաժառանգի եւ սվիտայի ուղեկցութեամբ, այցելութիւններ գործեց մինիստրներին, քաղաքապետին, նահանգապետին եւ կոմենդանտին։—Փետրվարի 12-ին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնա Անիչկովեան պալատում ընդունեց, Մեծ Իշխան Թագաժառանգի ներկայութեամբ, բուխարական էմիրին եւ նրա ժառանգին սվիտայի հետ միասին։—Տան եւ մէկ ու կէս ժամին պարելու դահլիճում նայեցին էմիրի բերած թանգագին ընծաները։—Նորին Մեծութիւնը պատուհանից նայում էր էմիրի ընծայ բերած ձիերի վրա։ Բարձրագոյն թոյլատրված է Կիեվ քաղաքին 2,500,000 ր. փոխառութիւն անել։—Յայտարարվում է Մոսկվայի Կայսերական համալսարանի ուսանող Պոմպասէվիչի մահվան մասին տարածված լուրերի առիթով, որ այդպիսի ազգանունով ուսանող չը կար Մոսկվայի համալսարանում։—Նոցա Կայսերական Մեծութիւններ Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնա այցելեցին պաժերի կորպուսը. Նորին Մեծութիւնը շնորհաւորեց եօթ պաժերին կամէրպաժի աստիճանով։ Ներքին բաղի միջով գնալով դէպի կաթոլիկական եկեղեցին, Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհին այցելեցին Դուքս Մաքսիմիլիան Լէյխտենբերգսկու դամբարանը, որ գտնվում է Ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխանուհի Մարիա Նիկոլաեվնայի կամքով կաթոլիկական եկեղեցուն կից շինված մատուռում։ Նորին Մեծութիւնը հրամայեց արձակել պաժերին երեք օրով։ Փետրվարի 11-ին, ցերեկով Ալէքսանդրո-Նեվսկայա վանքում անյայտ չարագործը Նիկոն վարդապետին ոսանելու փորձ արեց կողոպտելու նպատակով. չարագործը մուրճով երկու զօրեղ հարուած հասցրեց վարդապետի գլխին, իսկ ինքն սկսեց փախչել։ Իր ամուր կազմուածքի շնորհիւ, վարդապետը, չը նայելով իր 72 տարիների եւ առատութեամբ արիւն կորցնելուն, անկողին չը մտաւ։ Կողոպտողին ձերբակալելու համար արտակարգ միջոցներ են ձեռք առնված։

ՕԴԷՍԱ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական Զէնդէր ճանապարհ ընկաւ Օդէսայից։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Բարձրագոյն թոյլատրված է տալ ֆինլանդական արքունական գումարներից 630,000 մարկ Հէլսինգֆորսի պոլիտէխնիական ինստիտուտի շինութիւնները ընդարձակելու համար, 200,000 մարկ՝ Սիպպալա կալուածքի մի մասը դնելու նպատակով հողաբաժիններ ծախելու համար դօրպարների վրա եւ 280,000 մարկ փոխ տալ ֆիննական թատրոնի ակցիոնէրական ընկերութեան։

ՍԻՄԲԻՐՍԿ։ Վախճանված Ա. Ի. Կարտաշէվ, որը շատ տարիներ քաղաքագլուխ էր, կտակեց իր ամբողջ կարողութիւնը քաղաքին բարեգործական նպատակներով։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Պրինց Հէնրիխ եւ նախագահ Ռուզվէլտ միմեանց փոխադարձապէս այցելութիւններ գործեցին։ Պրինցը այցելեց սենատի նիստը, ուր ծափահարութիւններով դիմաւորեցին նրան։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Երէկվայ բանկէտում Սպիտակ տան մէջ ի պատիւ պրինց Հէնրիխի, նախագահ Ռուզվէլտ առաջարկեց գերմանական կայսրի եւ գերմանական ժողովրդի կենաց բաժակը եւ ասելացրեց. «Մենք ապշած ենք Գերմանիայի մեծ մտցեալի եւ նրա այժմեան մեծութեան վրա եւ ցանկանում ենք նրան ամեն տեսակ աջողութիւններ ապագայում։ Եւ թող ամրանան անդադար բարեկամութեան կապերը գերմանական եւ հիւսիս-ամերիկական ժողովուրդների մէջ»։ Պրինցը պատասխանեց նախագահի եւ Միացեալ-նահանգների ժողովրդի կենացով եւ յոյս յայտնեց, որ բարեկամական յարաբերութիւնները հաստատուն կը լինեն երկու ազգերի միջեւ։ Ապա Ռուզվէլտ պրինցի կենացը խմեց եւ ասեց. «Ամերիկական ժողովրդի անունից ջերմագին ողջունում եմ ձեզ եւ հաւատացնում եմ ձեզ մեր հոգեկան համակրութեան մէջ»։ Կէս գիշերին պրինցը վերադարձաւ Նիւ-Եորկ։

13 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մինիստրների կոմիտէի գիւանատան բաժանմունքի գլխաւորի աւագ օգնական Բերեզնիկով նշանակվում է չէրնոմորեան փոխ-նահանգապետ։—Անուղղակի տուրքերի եւ խմիչքների արքունական վաճառման գլխաւոր կառավարութիւնից յայտարարվում է. «Ֆինանսների մինիստրը, երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրի համաձայնութեամբ, կարելի համարեց թոյլ տալ արտահանել Պարսկաստան նաւթային լուսաւորող իւղեր, ակցիզը վերացնելով, ընդհանուր հիմունքներով, Սերախսի մաքսատան միջոցով, այն պայմանով, որ այդ իւղերը մաքսատանը քննվեն ակցիզային վարչութեան պաշտօնեայի մասնակցութեամբ։—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը յայտարարեց այն պայմանները, որոնցով թոյլատրվում է միջնակարգ դպրոցների ուսուցիչներին մասնաւոր դասեր տալ վարձով այն դպրոցների աշակերտներին, ուր նրանք ուսուցանում են, նոյնպէս եւ այն պայմանները, որոնցով թոյլ է տրվում կանանց երաժշտութիւն աւանդել արական միջնակարգ դպրոցների ստորին դասարաններում, եթէ չը կան այդտեղ երաժշտութեան պատշաճաւոր պատրաստութիւն ունեցող ուսուցիչներ։

ՈՒԹԱ։ Անբերրիութիւնից վնասված նահանգներում սերմացու վարսակ անարգել կերպով հասցնվում է սայլերով. կերակրի պակասութիւնը առաջացրել է տիֆի, ընդացաւի դէպքեր. կուելու համար եկան Կարմիր Խաչի երեք խմբեր. սպասվում է չորրորդը։ Բացված են մինչեւ տասը հոգաբարձութիւն, մի քանի տասնեակ ճաշարաններ եւ ժամանակաւոր փոքրիկ հիւանդանոցներ։ Հասարակական աշխատանքները, որոնցով պարապված է մի քանի հազար մարդ, աջող են գնում։

ՄՈՍԿՎԱ։ Գինեգործների եւ այգեգործների ժողովում գանգատվում են, որ գինու առեւտուրը նեղված է խմիչքների վաճառման համար սահմանված նոր կանոնների պատճառով։ Հնար չունենալով ծախել, ազգաբնակութիւնը ինքն է խմում գինին մեծ քանակութեամբ։ Գինեգործները գանգատվում են, որ հարստահարվում են գինեվաճառներից, որոնք ինչին գնով առնում են միայն վատ գինիներ եւ խառնում են նրանց հետ շաքար. լաւ գինին չէ վաճառվում։ Եկեղեցական գինու սէկցիայում տեղի ունեցան տաք վիճաբանութիւններ. պարզվում է, որ այդ գինին կեղծում են ամենակոպիտ կերպով Մոսկվայում, Ռիգայում եւ Օդէսայում։ Ֆիննանսների մինիստրի ներկայացուցիչը առաջարկում էր յանձնել եկեղեցական գինու պատրաստութիւնը կամ ֆիննանսների մինիստրութեան, կամ Սինոդին կամ ուղղիղ վարչութեան։ Վերջինի ներկայացուցիչը առաջարկում էր կազմել գինեգործների սինդիկատ, որ պէտք է ունենայ մասնաներ Ռուսաստանի զանազան կողմերում, որոնք պէտք է գտնվեն հոգեւոր վարչութեան հսկողութեան տակ։ Սեկցիան այն միտքը յայտնեց, որ եկեղեցական գինին պէտք է անպայման ազատ լինի օտար խառնուրդներից։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Ալիսա Ռուզվէլտ կատարեց «Kaiser Wilhelm» զբօսանաւի մկրտութեան ծէսը, որից յետոյ զբօսանաւը ջուրն իջեցրվեց։

ԲԱԳՈՒ։ Հրդեհ սկսվեց Ց. Թումաեվի, Գր. Թումաեվի եւ Կասպիական ընկերութեան նաւթահանքերում։ Առաջինում այրվեցին հորերը, երկրորդում մի վիշկա եւ նաւթամբարը՝ 50,000 պուդ նաւթով, իսկ երրորդում չորս վիշկա։ Այրուածքներից վնասվեցին տասը մարդ. դրանցից մէկը մեռաւ, իսկ միւսը մեռնելու վրա է։—Ռուսաց վաճառանոցներում նաւթ ծախելու նպատակով համաձայնութիւն կայացրին հետեւեալ ընկերութիւնները—Ռուսաց նաւթարդիւնաբերութեան, Ռուսաց նաւթի Բաղուի ընկերութիւնը, կէրօսինի եւ իւղերի ընկերութիւնը եւ Կավկազ նաւթարդիւնաբերական ընկերութիւը։ Միացած ընկերութիւնների տարեկան արդիւնաբերութիւն է 20 միլիոն պուդ կէրոսին, 40 միլիոն պուդ մազուտ եւ 3 միլիոն պուդ զանազան իւղեր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, փետրվարի 16-ին,
նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Սկիզբը երեկոյեան 9 ժամին
Պարտաւորական է դիմակով լինել։ Վերջը։ Հագուստի ձեւը՝ զինուորական։ Պէտք է լինեն իրանց սովորական համարտով, քաղաքացիները—սիւրտուկներով, եւ գայլին չորերով։
Տոմսակները գտնվում են ժողովարանի նապանի մօտ։
1—

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում
վաճառվում են՝
ՄԱՐԻԱ ԿՕՐԵԼԻ, Մի մանկան հոգու պատմութիւն, վէպիկ ոչ մանուկների համար, ռուսերեն թարգմ. Տ. Վ, Վաղարշապատ, 1902 թ. գ. 1 ր.
Ս. ՊՈՒՇԿԻՆ, Ցաւերժահարսը, պօէմա, թարգմ. Կ. Կրասիլնիկեան, Թիֆլ. 1902 թ. գ. 15 [illegible]
ՊՐՕՖ. Ֆ. ՐԱՏՑԷԼ, Տարերք ազգագրութեան, մ. ա. գերմ. թարգ. Իս. Ցարութիւնեան, Թ[illegible] 1902 թ. գ. 50 կ.
Մ. ԼԵՐՄՕՆՏՕՎ, Դեւ, արեւելեան վէպ, թարգմ. Ց. Միրզայեան, Թիֆլ. 1901 թ. գ. 10 [illegible]
ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. Բ.Ժ., Առողջապահական նուէր նորատի կանանց, Այէքս. 1901 թ. գ. 20 [illegible]
Լ. ՏՕԼՍՏՕՅ, Ցարութիւն, վէպ, թարգմ. Տ. Յովհաննիսեան, Թիֆլ. 1902 թ. գ. 1 ր. 50 կ.
ԱԼՖՈՆՍ ԴՕԴԷ, Ֆրոմոն կրտսեր եւ Ռիսլէր աւագ, վէպ, թարգ. Տ. Յովհաննիսեան, Թ[illegible] 1902 թ. գ. 1 ր.
ԼԷՕ, Հայկական տպագրութիւն, մեր կեանքը, գրականութիւնը անցեալում, հատոր բ. [illegible] 1901 թ. Թիֆլ. գ. 1 ր. 50 կ., նոյնը եւ հատ. ա. գ. 1 ր. 50 կ.
ԱՖԼՕՐ ԵՂԲԱՑՐ կամ մի մանկական զուարճալի պատմութիւն, գ. 40 կ.
ԿԻՊՐԻԱՆՈՍ. աղօթագիրք, կազմով—40 կ.
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (п.) 2—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ
XVIII ԴԱՐ
Ա ռ ա ջ ի ն մ ա ս
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԵԿ
Ծախվում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція Мш[illegible] «Գուտենբերգ» գրավաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбе[illegible]
Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 բուբլի 50 կոպէկ։

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ
Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑԻ Զ—ՈՎ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Վերջին ժամանակներս ծախու երեւացին
ՊԱՊԻՐՕՍՆԵՐ
Նոյն տեսակ տիպիկներով եւ մակագրութիւնների նոյնանման տառերով էտիկէտների վրա, նոյնպէս եւ ծրարների ու թղթարկղների նոյն ձեւով, գործածելով նոյն գոյնի թուղթ եարլիկների եւ ծրարների համար, որոնք վաղուց մեր ֆիրմայի անագին տարածումն ստացած պապիրոսների արտաքին տարբերութիւնն են կազմում։
ի նախազգուշացումն ամեն խաբեբայութիւններից
բոլոր էտիկէտների վրա մենք սահմանել ենք առանձին նշան, որ հաստատված է ֆիննանների մինիստրութեան արդիւնաբերական բաժնի կոմիտէի կողմից։ Մեր գործարանի նշանին նմանեցնելու համար յանցաւորները դատի կենթարկվեն օրինական կարգով։ Մեր ֆաբրիկատները գնելու ժամանակ խնդրում ենք առանձին ուշադրութիւն դարձնել գործարանական նշանի եւ մակագրութեան վրա։
Н. И. БОЗАРДЖІЯНЦЪ С—МИ.
(п. հ. կ.) 3—6

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԻՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացա[illegible]
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈՒԿՈՒՄԻ, Կարամէլ «ԻԻԲԻԼԻՑՆԱՑԱ» եւ առհասարակ բոլոր բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։
Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։
23—100 (հ. կ.)

Дозволено Цензурою, Тифлисъ, 13 Февраля 1902 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.